

Եպիսկոպոսներ ինձի՝ տկար աղջկան մը դէմ միաբանեցան. այս ցուրտին, ձիւնին...

– Շատ բարի, զաւակս, դու հանգիստ բռնէ սիրտդ, գարնաւ իմ պարտքս լինի քեզ Սիւնեաց երկիրը դարձնել: Հիմա դու գնա՛, քեզ համար պատրաստ եալ սենեակը: Յանգի՛ր: Ես կը մտածեմ եւ ինչ պէտք է ընել կը հոգամ: Գնա դու հիմա, գարունը, քեզի ըսի, պէտք է սպասես:

Այս յուսատու խօսքերն լսելով Սիւնեաց աղջկան արտասուաթոր այտից վրայ ծիծաղ ծագեցաւ եւ երկիւղը, կասկածը պարզ վստահութեան փոխարկեալ՝ Վասկանուշին ձեռքերը համբոյրներով ծածկելով.

– Գարնան քանի՞ օր կայ, սիրուն Տիկին, ըսաւ:

– Ձմեռուան դեռ կեսն ենք, աղջիկս, երբ գարունը դա, դու էլ կը տեսնես, ես էլ:

– Շատ բարի, ես կ'երթամ պառկելու, շատ յոգնած եմ:

Եւ երբ դուրս ելաւ աղջիկը, մայրապետ տիկինն սկսաւ մտածել, եւ առագծ տեղեկութիւններէն այնպէս դատեց, որ Աշոտի յանդուգն ձեռնարկութիւնք կամ սպառնալիք պատճառ տուած էին այս տարածամ աքսորանաց: Իւր դատմունքն այնչափ ուղիղ էր, որ հազիւ երկու-երեք օր անցաւ այս դիպուածիս վրայ, եւ ահա առաւօտ մը կանուխ լուր տուին թէ Սմբատաւանի պետր եկեր էր կարելոր լուր մը հաղորդելու: Երբ հրամայեց իրեն բերել, տարիքն առած համեստ մարդ մը ներկայացաւ, որ ամենայն յարգանօք ողջունելէն վերջ սպասեց, որ հրամայէ խօսիլ:

– Բարի եկիր, Թադոս հայրիկ,– ըսաւ Վասկանուշ,– կարելոր լուր ունիս եղեր հաղորդելու, ի՞նչ է, ըսէ տեսնեմ: